**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար կենցաղային, տնտեսական ապրանքների, տնտեսող լամպերի և ավտոմեքենաների անիվների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/17» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի հոկտեմբերի 17-ին կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-6» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2026 թվականի մարտի 30-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը 2026թ. համար նախատեսված ֆինանսական միջոցների մասով հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.15 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 17.10.2025թ. N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-6» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «30» «03» 2026թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և Ս.Ա.Վ. ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Վարդումյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 17.10.2025թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-6» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրի 9-րդ չափաբաժնով նախատեսված 4000 զույգ աշխատանքային ձեռնոցներից 2000 զույգ աշխատանքային ձեռնոցների մասով 264 000 (երկու հարյուր վաթսունչորս հազար) ՀՀ դրամ ֆինանսական միջոցների առկայությունը և ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը 2026թ. համար նախատեսված ֆինանսական միջոցների մասով հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ***Դատական դեպարտամենտ*** | ***Ս.Ա.Վ. ԳՐՈՒՊ ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1 | Հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, Առինջ Բ թաղամաս, 1-ին փողոց, թիվ 2/1 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 07616781 |
| Հ/Հ՝ 900011192151 | Հ/Հ՝ 2052122121581001 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Ղեկավար՝ Ն. Գալստյան | Տնօրեն՝ Ս. Վարդումյան |
| _______________ /ստորագրություն/ | _______________ /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |

**Հավելված N 1**
**« 30 » « 03 » 2026թ. կնքված N 2 համաձայնագրի**

*(Հավելված N 3*
*« 17 » « 10 » 2025թ. կնքված*
*N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-6» ծածկագրով պայմանագրի)*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Ապրանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | |
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 9 | 18141100/3 | Աշխատանքային ձեռնոցներ | 264 000 | 264 000 | 264 000 | 264 000 | 264 000 | 264 000 | 264 000 | 264 000 | 264 000 | 264 000 |

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
***Ս.Ա.Վ. ԳՐՈՒՊ ՍՊԸ***
Հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, Առինջ Բ թաղամաս, 1-ին փողոց, թիվ 2/1
ՀՎՀՀ՝ 07616781
Հ/Հ՝ 2052122121581001
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ս. Վարդումյան

/ստորագրություն/
Կ.Տ.